

ՀԱՄԱՅՆՔԻ ԱՌՈՐՅԱՆ

ՔՐԻՍՏՈՍ ՀԱՐՅԱՎ Ի ՄԵՌԵԼՈՑ ՕՐԸՆՅԱԼ Ե ՀԱՐՈՒԹՅՈՒՆԸ ՔՐԻՍՏՈՍԻ



Հիսուս Քրիստոսի հրաշափառ Հարության տոնը կոչվում է նաև Ջատիկ, որը նշանակում է գատում, բաժանում, հեռացում մեղքերից և վերադարձ առ Աստված: Ջատիկը Հայ առաքելական եկեղեցու 5 տաղավար տոներից մեկն է: Հիսուս Քրիստոսի խաչելությունից և մահից հետո՝ երեկոյան, բարեպաշտ մարդիկ Նրա մարմինը իջեցրին խաչից և դրեցին վիմափոր գերեզմանի մեջ՝ փակելով մեծ քարով: Երեք օր հետո՝ կիրակի առավոտյան, յուզաբեր կանայք՝ Մարիամ Մագդաղենացին, Հակոբի մայր Մարիամը և Սողոմեն, գնացին գերեզման անուշաբույր յուղերով օծելու Քրիստոսի մարմինը, սակայն գարմանքով տեսան,

չկա, ապա և Քրիստոս հարություն չի առել: Եվ եթե Քրիստոս Հարություն չի առել, իզուր է մեր քարոզությունը, իզուր է և ձեր հավատը» (Ա. Կորնթ. 15:13-14):
Մ. Հարության տոնին հավատացյալները միմյանց ողջունում են «Քրիստոս յարեալ ի մեռելոց» ավետիսով, պատասխանում «Օրհնեալ է Յարութիւնն Քրիստոսի»: Ջատիկ տոնին հավատացյալները ձու են ներկում: Ներկված ձուն համարվում է Հարության և նոր կյանքի խորհրդանշան: Կարմիր գույնը խորհրդանշում է խաչյալ Հիսուսի կենդանարար արյունը, որ թափվեց մարդկության փրկության համար: Ըստ Ս. Գրիգոր Տաթևացու «Միայն Ջատիկն



որ շարունակ՝ մինչև Հոգեգալստյան տոն (Պենտեկոստե): Այս ընթացքը կոչվում է Հինանց շրջան կամ Հինունք, որը ծագում է «հիսունք» բառից: Հինանց շրջանի քառասուն օրերը Հարուցյալ Քրիստոսի աշակերտներին երևալու և Աստծո արքայության մասին վկայություններ տալու հիշատակություն են (Գործք 1:3), իսկ վերջին տասն օրերը նվիրված են Քրիստոսի Համբարձմանը:
Հինանց շրջանն ավարտվում է Հոգեգալստյան տոնով: Համբարձումից տասն օր հետո, ըստ Քրիստոսի խոստման, առաքյալների վրա իջավ Աստծո Ս. Հոգին, և գորացած առաքյալները վկայեցին Քրիստոսի ամբողջ աշխարհում:
Ջատիկը սկիզբ է առել հրեաների կողմից նշվող Պասեք տոնից, որի ժամանակ, ըստ քրիստոնեական դավանանքի, 1-ին դարում Երուսաղեմում խաչվել և հարություն է առել Հիսուս Քրիստոսը: Պասեքը հրեաների կողմից ինչպես նախկինում, այնպես էլ այսօր տոնվում է ի նշան եգիպտական գերությունից ազատագրման և մասնավորապես Հին կտակարանում նկարագրվող այն դրվագի, երբ Աստված նոխազի արյան միջոցով զատեց իր ժողովրդին՝ եգիպտացիների վրա ուղարկված աղետից անդրանիկ գավակների կոտորածից: Համաձայն քրիստոնեական ուսմունքի այդ իրադարձությունը նախանշան էր Հիսուս Քրիստոսի (Գառն Աստծո) կամովին մահվան ընդունման և իր արյան հեղման հանուն մարդկության փրկության: Քրիստոնեական եկեղեցիները Հիսուս Քրիստոսի հարությունը տոնում են որպես գատիկ, որովհետև ըստ քրիստոնեական ուսմունքի Քրիստոսն է հավիտենական այն գոհը կամ պատարագը, որի միջոցով մարդն ստանում է մեղքերի թողություն, ապա կյանք և հարություն: Պողոս առաքյալը Հիսուսին այդպես էլ կոչում է գատիկ, «...քանզի Քրիստոս մեր գատիկը, մորթվեց...»:

Պատրաստեց՝
Արմինե ՀՈՎՍԵՓՅԱՆԸ



որ քարայրի մուտքի քարը հեռացված է, իսկ գերեզմանը՝ թափուր: Մինչ նրանք տարակուսում էին, երևացին երկու հրեշտակ և ասացին. «Ինչո՞ւ եք ողջին մեռելների մեջ փնտրում: Այստեղ չէ, այլ Հարություն առավ» (Լուկ. 24:5-6):
Հարության լուրը կանայք ավետեցին առաքյալներին, որից հետո Հիսուսը երևաց նրանց: Քրիստոսի Հարությունը դարձավ քրիստոնեական վարդապետության և հավատի հիմքը: «Եթե մեռելների հարություն

ենք ձու ներկում, որովհետև ձուն օրհնակ է աշխարհի», և ինչպես իմաստուններն են ասում, «Դրսի կեղևը նման է երկնքին, թաղանթը՝ օդին, սպիտակուցը՝ ջրին, դեղնուցն էլ՝ երկիրն է: Բսկ կարմիր գույնը խորհրդանշում է Քրիստոսի արյունը: Եվ մենք կարմիր ձուն մեր ձեռքերի մեջ առնելով՝ հոչակում ենք մեր փրկությունը»: Հիսուս Քրիստոսի հրաշափառ Հարության տոնը Հայ եկեղեցին նշում է հիսուն

ԽՈՆԱՐՇՈՒՄՍ, ԻՍ ՆՈՐՈՐՅԱ ՀԵՐՈՍ



Մերօրյա հերոս Ազիզ Աղաջանյանը մայիսի 20-ին կորստանք 20 տարեկան

Գրում է ՀՀ Արմավիր քաղաքի Վ. Բախշյանի անվան թիվ 2 հիմնական դպրոցի հայոց լեզվի և հայ գրականության ուսուցչուհի Նազելի Պողոսյանը.

«Լուռ էի... որովհետև սպասում էի, սպասում էի, որ հրաշք լիներ, քր լսածս սուտ լիներ, բայց... ավադ,

ցանկությունս նենգ թշնամին անկատար թողեց, օդում սառած թողեց: Ախր միայն ես չէ, քո բոլոր ուսուցիչներն են անհաշտ այս մտքի հետ... ավետիս էինք ուզում, բայց...
Ապրիլյան պատերազմի օրերն էին, երբ մտա դասարան և հանձնարարեցի շարադրություն «Գյանք հանուն կյանքի»: Հայացքդ դաջվել է հիշողություն մեջ. երբ խոսեցի հերոս նահատակներից, և արցունք կար աչքերիս, ասացիր. «Էդ լա ց եք լինում, մի լացեք, մի օր էլ մենք ենք գնալու»: Այդ ժամանակ մանկական չարածճություն կար մեզ: Իմ ուրախ ու կենցաղիս Ազիզ Աղաջանյան, ինչ իմանայիր, որ չորս տարի անց դու էլ ես դառնալու հանուն հայրենյաց հողի համար ընկած ՍՈՒՐԲ ԶԻՆՎՈՐ, իսկ իմ մտքով երբևէ չէր անցնի, որ մի օր էլ կմտնեմ դասարան ու արդեն կխոսեմ քո հերոսական սխրագործությունից, արդեն իսկ քո քաջ լեզունից: Քո մասին դժվար է անցյալով խոսել, իմ ջիգարով (դու էիր սիրում այս բառն օգտագործել) տղա: Դու իմ, քո բոլոր ուսուցիչների հիշողության մեջ միշտ կմնաս կենդանի ու քայլող շԵՐՈՍ, պատմություն կերտող շԵՐՈՍ:
Լույս էիր, լույսի կտոր էիր, լույսի մեջ էլ գտնես քո արքայությունը: Խոնարհումս, իմ նորօրյա շԵՐՈՍ»:



Նազելի Պողոսյանը

Ախր ես ինչպե՞ս վեր կենամ գնամ, Ախր ես ինչպե՞ս ուրիշ տեղ մնամ...
Համո Սահյան

Մերունդների արյունակցական կապը խորհրդանշող տոնաձևաձևի մի ճյուղ կոտրվեց: Հյուրը պոկվեց ու ընկավ փոթորկի բերանը: Հողմածեծ քամին նրան բզկտեց, կտոր-կտոր արեց ու տարածեց աշխարհով մեկ: Կոտրված ճյուղը ծառի բնին թողեց իր սպին, անամոք ու խոր սպին: Հյուրի կտորները, որ հողը ընկան այնտեղ ձեցին. նվազ, հայրենի հողի անափ կարոտով ձեցին: Օլեցին, որովհետև հայրենի հողի ուժն ունեին իրենց մեջ, որովհետև հայրենի հողը ձգում էր նրանց...
Ահա քամու բերանն ընկած, հրկա ծառից գատված մի ճյուղ էին այն տարագիրները, որոնք սփռվեցին աշխարհով մեկ: Դժվար էր հայրենի հողից կտրվելը, բայց ինչ արած, անհրաժեշտություն էր: Անհրաժեշտություն էր, որովհետև միայն հեռանալը կփրկեր նրանց, միայն փախչելը կազատեր նրանց դառն ու դաժան կյանքից: Եվ թողած հայրենի օջախն ու հողը, դաշտերն ու գմբուխտ սարերը, հեռացան, դարձան

ՃՂԱԿՈՏՈՐ ԾԱՌԸ

տարագիր և պանդուխտ: Զգացին, թե հայրենի երկրից հեռու բացվելու է մի ուրիշ կյանք խաղաղ ու հանգիստ առօրյաով: Բայց ավադ, դառն ու դաժան է պանդուխտի կյանքը, արյունով ու արցունքով է շաղախված նրա հանապազօրյա հացը: Օտար երկիրը նրան երջանկություն չի խոստանում, օտար հողը երբեք չէ նրա ոտքերի տակ, օտար երբը թախիծ ու մոայլություն է բերում նրա հոգուն, իսկ կարոտը մաշում ու տանջում է պանդուխտի սիրտը:
Մակայն հայրենի հողի ձայնը նրանց կանչում է: Շատ-շատերն են եկել ու հանգրվանել մայր հողի վրա, շատ-շատերը գտել են իրենց կորցրածը: Ուրեմն, հողի ձայնը նրանց կանչում է, թեկուզ հայրենի հողից հեռու, բայց իսկական հայրենասերը շնչում է հողի բույրը, ապրում է հայրենիքի ծաղկանքի մոլորաբանյալը՝ հաջողություններով: Ուրեմն, հայրենիքը կանչում է նրանց:
Հյուրը կտրվեց ու ընկավ հողմածեծ քամու բերանը: Քամին նրան մաս-մաս արեց, երախն առած տարածեց աշխարհով մեկ, բայց դառն չընկճվեց: Գոյատևեց կյանքի դաժան պայմաններում, հաջող տարիների նորից ծաղկեց, ծաղկեց, որովհետև հայրենի հողի ուժն ունեցր իր մեջ, ծաղկեց, տվեց դարերով կուտակված իր քաղցրությունը: Բայց... ծառը ճղակոտոր է... Ինչ էլ լինի ծառի բնին, դեռ երկում է կոտրված ճյուղի թողած սպին եզերված ոլորանման օղակներով...